Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
մարտի 27-ի N 348-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են խաղային գործունեության կազմակերպչի (այսուհետ՝ կազմակերպիչ) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և կազմակերպչի պատասխանատու անձ համարվելու ստուգման միջնորդության (այսուհետ՝ միջնորդություն), ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում հասկացություններն օգտագործվում են «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված իմաստով:

3. Կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և կազմակերպչի պատասխանատու անձ համարվելու ստուգման նպատակով անձինք լիազոր մարմին են ներկայացնում համապատասխանաբար սույն որոշման 1-ին կետով սահմանված միջնորդությունները և սույն կարգով սահմանված անհրաժեշտ կից փաստաթղթերը:

4. Անձի կամ փոխկապակցված անձանց կողմից մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դեպքում միջնորդությանը կից ներկայացվում են նաև միջնորդությունում նշված բոլոր ֆիզիկական անձանց՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև արտասահմանում գրանցված իրավաբանական անձանց գրանցումը հավաստող՝ պատշաճ կերպով վավերացված փաստաթղթերը:

5. Կազմակերպչի պատասխանատու անձ համարվելու նպատակով միջնորդությանը կից լիազոր մարմին է ներկայացվում կազմակերպչի պատասխանատու անձի թեկնածուի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

6. Օտարերկրյա քաղաքացիները լիազոր մարմին են ներկայացնում նաև իրենց քաղաքացիության պետության համապատասխան մարմնի կողմից տրված և պատշաճ կերպով հաստատված՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու, կամ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու մասին տեղեկանք, ինչպես նաև համապատասխան տեղեկանք ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքի սահմանափակում չունենալու մասին:

7. Օտարերկրյա կազմակերպությունները լիազոր մարմին են ներկայացնում նաև կազմակերպչի նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրանց հետ փոխկապակցված անձ հանդիսացող իրավաբանական անձանց նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ, փայատիրոջ կամ մասնակցի կամ տնօրենի վերաբերյալ՝ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

8. Միջնորդությունը և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացվել էլեկտրոնային համակարգի միջոցով՝ սույն կարգով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով կամ թղթային տարբերակով:

9. Թղթային տարբերակով միջնորդությունը և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին են ներկայացվում առձեռն կամ փոստային առաքմամբ:

10. Միջնորդությունը և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացված են համարվում առձեռն ներկայացնելու դեպքում՝ լիազոր մարմնի կողմից՝ ստացականի, իսկ փոստի միջոցով՝ փոստի կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից:

11. Միջնորդությունը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերենով, «Յունիկոդ» կոդավորմամբ տառատեսակով:

12. Միջնորդությունը և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում դրանք ներկայացնելու պահանջը համարվում է կատարված, եթե անձը տեղեկատվական համակարգում համացանցի միջոցով լրացնում է միջնորդության համար անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթուղթը հաստատում է էլեկտրոնային ստորագրության միջոցով: Միջնորդության և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերի՝ լիազոր մարմնում մուտքագրված լինելու փաստը հավաստվում է նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ հետադարձ ծանուցմամբ, որը պարունակում է 12-նիշանոց ծածկագիր:

13. Լիազոր մարմինը սույն կարգով սահմանված պահանջվող բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում ուսումնասիրում է դրանք: Լիազոր մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել ևս մեկ ամիս ժամկետով, եթե ներկայացված փաստաթղթերը պարունակում են այնպիսի տեղեկություններ, որոնք կարիք ունեն լրացուցիչ ուսումնասիրության: Երկարաձգման որոշման կայացման մասին 1-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ ձևով տեղեկացվում է կազմակերպիչը:

14. Սույն կարգի իմաստով միջնորդության ուսումնասիրությունը ներառում է միջնորդությունում և կից փաստաթղթերում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում:

15. Ուսումնասիրության գործընթացում լիազոր մարմինը իրավասու է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու միջնորդությանը առնչվող անձանց վերաբերյալ տեղեկություններ, փաստաթղթեր:

16. Միջնորդությունը ներկայացնելու փաստի ուժով անձը համարվում է տեղեկացված լիազոր մարմնի՝ սույն կարգով նախատեսված մարմիններից օրենքով նախատեսված տեղեկություններ պահանջելու և ստանալու լիազորության մասին:

17. Լիազոր մարմնի կողմից մեկամսյա ժամկետում բացասական եզրակացություն չտրամադրվելու կամ սույն կարգի 13-րդ կետով նախատեսված համապատասխանության ստուգման ժամկետը չերկարաձգվելու դեպքում դրական եզրակացությունը համարվում է տրված:

18. Ստուգման արդյունքով լիազոր մարմինը տալիս է բացասական եզրակացություն, եթե առկա են օրենքի 6-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերը, կամ լիազոր մարմինն ունի հիմնավոր փաստեր, որ կանոնադրական կապիտալում մասնակցության համար նախատեսված դրամական միջոցները ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով: Դրամական միջոցները հանցավոր ճանապարհով ձեռք բերված չլինելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է անձը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ